

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության փորձագետ Աիդա Միրումյանի

Ես՝ Աիդա Միրումյանս, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2023թ. օգոստոսի 31-ից (2023թ. օգոստոսի 31-ին կնքված N34 Պայմանագրի համաձայն):

2023թ. օգոստոսի 31-ից 2024թ. փետրվարի 28-ը ներառյալ՝ համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Գործընկեր և տարածաշրջանային երկրների սոցիալ-տնտեսական զարգացումների ուսումնասիրություն և ՀՀ տնտեսության վրա դրանց ազդեցությունների գնահատում,
- Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կապիտալի և ֆինանսական հաշիվների հիմնական բաղադրիչների պարբերական վերլուծություն,
- Տնտեսության արտաքին կայունության, մասնավորապես, պաշտոնական պահուստների համարժեքության գնահատումների թարմացում, արտաքին պարտքի կայունության գնահատում,
- Տնտեսության արտաքին հատվածի խոցելիությունների ախտորոշում և ներկայացում,
- Օտարերկրյա ուղղակի ներդրումների և արտաքին մասնավոր պարտքի կանխատեսման մոդելների մշակում և լավարկում, արդյունքների ներկայացում և գործնական կիրառում,
- Պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի մակրոշրջանակի մշակման աշխատանքներին մասնակցություն,
- Պետական բյուջեի հաշվետվություններում համապատասխան հատվածների ձևակերպում,

- Տնտեսական իրավիճակի օպերատիվ վերլուծությունների շրջանակներում զեկույցների և շնորհանդեսների ներկայացում, անհրաժեշտ տեղեկանքների պատրաստում:

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության փորձագետ՝



Աիդա Միրումյան